է բարոյապէս կրթել գրքերով, պէտք է մի առանձին ուշք դարձնեն այս տեսակ բովանդակութիւն ունեցող գրքերի հրատարակութեան վերայ։

Այս գրքոյկում պատմւում է Բուլղարիայի նորագոյն պատմութեան ամենափայլուն հերոսներից մէկի՝ սարկաւագ Լեւսկու կեանքի և գործունէութեան մասին։ Բուլղարական զօրաւոր կազմակերպութիւն տուողներից առաջիններն էին Լեւսկին և Լիւբէն Կարաւելովը. Նոցա ուսանելի գործունէութեան հետ բաւական լաւ ծանօթացնում է այս գրւածքը։

Այս համարում բերած Պետերբուրգի հինգ հրատարակութիւնների մէջ ամենանշանաւորն է «Սարկաւագը»։

Լ. Ս.

«ՀԱՋԻ-ԴԻՄԻՏՐ» ու «ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՋԱ»։ Ս.-Պետերբուրգ. տպարան Սկորոխոդովի, 1890 Թ. 8-ածալ 32 երես. տառ № 12, գինն է 3 կոպ.։

Յայտնի քաղաքական պայմաններում մի ազգի մէջ յառաջ են գալիս առանձին տեսակ աւազակներ, որոնք մղում են կատաղի կռիւ թշնամիների հետ։ Բուլղարիայում Հաջի-Դիմիտրին և Ստեփան Կարաջան այդ տեսակ աւազակների՝ գայդուկների՝ առաջին պարագլուխներից էին. Նոցա քաջագործութիւնները և հերոսական մահը Թուրքերի դէմ վարած կռիւներում դարձրել են այդ անձնաւորութիւնները բուլղար ժողովրդի համար պաշտելի։

Գրքոյկում գործ է ածւում «կառավարութիւնի, ազատութիւնի, օգնութիւնի» ձևը։ Լեզուն ժողովրդականացնելու համար պէտք է, կարծում ենք, ուշք դարձնել նախադասութիւնների պարզ կազմութեան և խօսքերի ընտրութեան վրայ և ոչ գրական լեզուի ծռմռել։ Ուրիշ խնդիր է եթէ ամբողջ գրութիւնը մի որ և է ժողովրդական բարբառով լինի պատմւած։ Նոյն իսկ նպատակայարմար կը լինէր օրինակ մշեցիների բարբառով այս երկու գրքոյկների հրատարակութիւնը, բայց երբ մի բան ժողովրդի համար պատմւում է գրական լեզւով, ցանկալի է այդ լեզուի մաքրութիւնը և կանոնաւորութիւնը ըստ կարելոյն պահպանած տեսնել։

Լ. Ս.